

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈԿՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ
ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 1 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ, ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՀԻԴՐՈԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ, ԳԾԱԳՐԵՐ



ԵՐԵՎԱՆ 2017



ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈԿՖ ԹԱՂԱՄԱՍԻ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԻՐՔ 1 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ, ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ՀԻԴՐՈԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ, ԳԾԱԳՐԵՐ

«ՀԱՆԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի տնօրեն

Դ. Հովսեփյան

Գլխավոր ճարտարագետ

Ս. Թաթյան

ԵՐԵՎԱՆ 2017

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈԿՖ ԹԱՂԱՄԱՍԻ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Նախագծի կազմը

Գիրք 1. Նախագծային առաջադրանք, բացատրագիր, երկրաբանական
և հիդրոերկրաբանական եզրակացություն, տեղեկանք, գծագրեր

Գիրք 2. Աշխատանքների ծավալներ

Գիրք 3. Նախահաշիվներ

Գիրք 4. Տեխնիկական մասնագիր

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈԿՖ ԹԱՂԱՄԱՍԻ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Գիրք 1

Բովանդակություն

1. Նախագծային առաջադրանք
2. Բացատրագիր
3. Երկրաբանական եզրակացություն
4. Հիդրոերկրաբանական եզրակացություն
5. Տեղեկանք
6. Գծագրեր`
 - ա. Դրենաժային համակարգ – 21 էջ
 - բ. Դրենաժային պոմպակայան տեխնոլոգիական մաս – 8 էջ
 - գ. Դրենաժային պոմպակայան կոնստրուկտորական մաս – 16 էջ
 - դ. Դրենաժային պոմպակայան էլեկտրո և ավտոմատիկական մաս – 4 էջ

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«Արարառի մարզի Արարատ քաղաքի ՈԿՖ թաղամասի դրենաժային համակարգի և պոմպակայանի վերակառուցում» նախագծի

Համաձայն տեխնիկական առաջադրանքի, նախատեսվում է Արարատ քաղաքի ՈԿՖ թաղամասի բնակելի շենքերի և հարակից տարածքում գտնվող դպրոցի ու մանկապարտեզի համար դրենաժային համակարգի և դրենաժային պոմպակայանի վերակառուցում նպատակ ունենալով կառուցվածքների նկուղները զերծ պահել ջրակալումից:

Ուսումնասիրվել է տեղանքը, համայնքի ղեկավարության ներկայացուցիչների հետ համատեղ, ճշտվել դրենաժային համակարգի ուղեծիրը, բնակելի շենքերի, և շինությունների հիմքերը և նկուղային հարկերը, որոնք գտնվում էին ջրածածկված վիճակում, որը ժամանակի ընթացքում կարող է բերել դրանց անցանկալի հետևանքների: Ընտրվել է նոր պոմպակայանի կառուցման տեղը և առկա հողային դրենաժային բաց առվի տեղը, ուր կուղարկվի թաղամասից հավաքված գրունտային ջրերը: Կատարվել է տեղանքի համույթը, կազմվել ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական եզրակացությունները:

Որոշվեց դրենաժային համակարգի և դրենաժային պոմպակայանի վերակառուցման նախագծում նախատեսել հետևյալ հիմնական կառույցների իրականացումը:

Աշխատանքներն ընդգրկում են՝ նոր դրենաժային համակարգի կառուցում պոլիէթիլեն ծալքավոր ծակոտկեն խողովակներից De200 L=1086մ; De300մ L=507մ և De400մ L=314մ ջրագծերի տեղադրում շրջապատված հակադարձ քամիչով, պոմպակայանից դեպի դրենաժային բաց առու գնացող De400մ L=70մ ջրագծի իրականացում, ինչպես նաև 45հատ Ե/Բ կոորդինատներ, խորքային պոմպակայանի կառուցում կահավորված 2հատ FA20.54E մակնիշի Q=47լ/վրկ, H=20մ և մեկ հատ FA20.54E մակնիշի Q=94լ/վրկ, H=20մ ընկղմված պոմպերով: Խորքային պոմպակայանի կողքին կառուցվում է կառավարման տնակ կահավորված էլեկտրական և ավտոմատիկայի վահանակներով, ինչպես նաև անհրաժեշտ փականներով: Հավաքված գրունտային ջրերը մղվում են բաց դրենաժային առվակ:

Աշխատանքներ

Վերը նշված դրենաժային համակարգի և դրենաժային պոմպակայանի վերակառուցման ընթացքում կատարվելու են հետևյալ հիմնական աշխատանքները՝

- Պոմպակայանի կատարված հարթակի մշակում պայմանով, որ էքսկավատորի խցիկը կարողանա պտտվել 360° և մշակել գրունտները մինչև նշված անհրաժեշտ նիշը.
- Պոմպակայանի կատարված և փոստրակի մշակում թաց գրունտներում ժամանակավոր ջրահեռացմամբ, ընկղմված շարժական պոմպի օգնությամբ: Փոստրակում կուտակվող գրունտային ջրաքանակը կազմում է շուրջ 5-8լ/վրկ.
- Ավազակոպճային նախապատրաստական շերտի իրականացում.
- Հատակի բետոնե նախաշերտի իրականացում.
Պոմպակայանի Ե/Բ հատակի, պատերի և ծածկերի իրականացում..
- Պոմպերի տեղադրում համապատասխան փականային սարքերի, էլեկտրասնուցման և ավտոմատիկայի վահանակների տեղակայում.
- Ծածկի բացվածքների վրա մետաղական թիթեղից մտոցների պատրաստում և տեղադրում.
- Էլ. Ենթակայանից մալուխային գծերի մոնտաժում.
- Կառավարման տնակի հիմքի համար գլավոպճային ետլիցք տոփանումով.

- Հատակի բետոնե նախաշերտի իրականացում.
- Հատակի բետոնե իրականացում.
- Պատերի կառուցում տ.Ֆե շարվածքով.
- Բետոնե աստիճանների կառուցում.
- Դռան և պատուհանների պատրաստում և տեղադրում.
- Ծածկի իրականացում.
- Օդափոխանակության խողովակի տեղադրում.
- Ասֆալտի շերտի կտրում ,բարձում և տեղափոխում.
- Դրենաժային ջրագծերի խրամուղու մշակում իր փոքր առվակով, խրամուղուց ժամանակավոր գրունտային ջրերի հեռացման համար, սկսած պոմպակայանի մոտից.
- Փորված խրամուղու շեպերի ամրացում վահանակների միջոցով.
- Հակադարձ եռաշերտ քամիչի իրականացում ծալքավոր ծակոտկեն խողովակներից, (տես հիդրոերկրաբանական եզրակացությունը) ջրագծերի տեղադրման հետ համատեղ.
- Դիտահորերի նախապատրաստական շերտի իրականացում.
- 45հատ Ե/Բ կլոր դիտահորերի տեղադրում.
- Ետլիցքի իրականացում մշակված գրունտներից տոփանումով.
- Ավելացած գրունտի բարձում և տեղափոխում.
- Ասֆալտի շերտի վերականգնում.
- Դրենաժային ճնշումային գծերի խրամուղու մշակում.
- Փափուկ գրունտից նախաշերտի իրականացում.
- Երկշերտ ծալքավոր խողովակների տեղադրում.
- Ավազի նախապատրաստական շերտի իրականացում.
- Ե/Բ դիտահորերի տեղադրում.
- Ետլիցքի իրականացում.

Շինարարական աշխատանքները ըստ նորմերի նախատեսվում է իրականացնել 4ամսվա ընթացքում:

Ընդունվել է ի գիտություն, որ շինարարության ընթացքում տեղանքի հետ կապված հարցերը համաձայն պայմանավորվածության կլուծվի համայնքի ղեկավարի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
„ԵՐԿՐԱԲԱՆ-ՈՒՏԻՔ”ՍՊԸ


Օբյեկտ՝ «ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի
ՈԿՖ թաղամասի դրենաժային համակարգի և
պոմպակայանի վերակառուցման նախագծի ինժեներա-
երկրաբանական հիմնավորում»

Պատվեր՝ 17-08

Պատվիրատու՝

Եզրակացություն

ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի ՈԿՖ թաղամասի դրենաժային համակարգի և
պոմպակայանի տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների
մասին



Տնօրեն՝

Ա. Գրիգորյան

Եզրակացություն

1. Հետազոտվող տեղամասը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի վարչական տարածքում, նրա հարավ-արևելյան եզրամասում, ՈԿՖ թաղամասում:

2. Շրջանը ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառներով, խիստ մայրցամաքային կլիմա:

Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 43°C :

Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -29°C :

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 238 մմ, գերակշռում են 0.8 մ/վրկ արագության, հյուսիս-արևմտյան և արևմտյան ուղղության քամիները, 20 տարվա ընթացքում մեկ անգամ հնարավոր են 21 մ/վրկ ուժգնության քամիներ: Ձյան ծածկոցի հաստությունը հասնում է 35 սմ, ճնշումը՝ 50 կգ/մ²:

Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 41 սմ:

3. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը տեղադրված է Արարատյան լճա-կուտակումային հարթավայրի սահմաններում, նրա հարավ-արևելյան եզրամասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևմուտք:

Մակերեսի միջերը տատանվում են 815.0-820.0 մետրի սահմաններում:

4. Ստորև տրվում են Դրենաժային համակարգի գծուղիների անցման գոտիների նշակետային նկարագրությունները

ԴՐԵՆԱԺ - 1

նկ 0+00 մինչև նկ 4+20

0.0-0.2 ասֆալտա-բետոնե ծածկոց, § 13, IV, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

0.2

0.2-0.8 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

0.6

0.8-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

3.2

նկ 4+20 մինչև նկ 5+59

0.0-0.2 ասֆալտա-բետոնե ծածկոց, § 13, IV, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

0.2

0.2-1.1 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

0.9

1.1-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

2.9

ԴՐԵՆԱԺ - 1-1 (նկ 0+00 մինչև նկ 2+29)

0.0-0.2 ասֆալտա-բետոնե ծածկոց, § 13, IV, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

0.2

0.2-1.5 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

1.3

1.5-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

2.5

ԴՐԵՆԱԺ - 1-2 (նկ 0+00 մինչև նկ 0+85)

0.0-0.4 լիցքային գրունտ, § 24-բ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

0.4

0.4-1.0 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

0.6

1.0-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԼԿ IV-2-82

3.0

ԴՐԵՆԱԺ - 2(նկ 0+00 մինչև նկ 1+34), ԴՐԵՆԱԺ - 3(նկ 0+00 մինչև նկ 2+40),

0.0-0.2 ասֆալտա-բետոնե ծածկոց, § 13, IV, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.2

0.2-1.2 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

1.0

1.2-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

2.8

ԴՐԵՆԱԺ - 3(նկ 2+40 մինչև նկ 3+89)

0.0-0.2 ասֆալտա-բետոնե ծածկոց, § 13, IV, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.2

0.2-1.1 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.9

1.1-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

2.9

ԴՐԵՆԱԺ - 4(նկ 0+00 մինչև նկ 0+98)

0.0-0.2 ասֆալտա-բետոնե ծածկոց, § 13, IV, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.3

0.2-1.1 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.8

1.1-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

2.9

ԴՐԵՆԱԺ - 5(նկ 0+00 մինչև նկ 1+84)

0.0-0.2 ասֆալտա-բետոնե ծածկոց, § 13, IV, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.2

0.2-1.0 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.8

1.0-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

3.0

ԴՐԵՆԱԺ - 6(նկ 0+00 մինչև նկ 2+31)

0.0-0.4 լիցքային գրունտ, § 24-բ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.4

0.4-1.0 ավազակավ, § 33-գ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

0.6

1.0-4.0 կոպճա-ավազային գրունտ, ճալաքարով, § 6-վ, III, աղյ. 1-1, ՇՆԿ IV-2-82

3.0

5. Պոմպակայանի տեղամաս

5.1 Պոմպակայանի տեղամասը գտնվում է հետազոտվող տարածքի հարավային եզրամասում ԴՐ1-2 -ի վերջնամասում:

5.2 Կատարված աշխատանքների հիման վրա տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը, վերևից ներքև՝

Շերտ քիվ 1 լիցքային գրունտ չպառկապնդված, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 25%, շինարարական, թափոններով, տարածունը համատարած է, հզորությունը՝ 0.3-0.5 մետր:

Տեխնածին առաջացումներ

Շերտ թիվ 2 ավազակավ, բաց շագանակագույն, գորշավուն երանգով, պինդ և ծիգ պլաստիկ թանձրության, կոպճի, հազվադեպ ճալաքարի պարունակությամբ մինչև 5%, սակավախոնավ և խոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.9-1.0 մետր:

Չորրորդականի հասակի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ 3 ավազ մանր դեղնավուն և կապտավուն երանգներով, կոպիճով մինչև 5%, փուխր, մանր ավազի նրբաշերտերով, կավային նյութի խառնուրդով մինչև 5%, սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0-2.0 մետր:

Չորրորդականի լճա-ալյուվիալ առաջացումներ

5.3 Ստորև, աղյուսակում տրվում է տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները, համաձայն նախկինում կատարված լաբորատոր փորձարկումների տվյալների, ըստ հրատարակված գրականության և գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջների՝

h/h	Գրունտի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշի (ցուցանիշի) անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը			
			ասֆալտա-բետոնե ծածկոց	լիցքային սղուն	սլոյմային կոմպակտ	խոլոսոլոմ
			1	2	4	5
1	Խտությունը, $q/սմ^3$	δ_0	1.75	1.70	1.75	2.0
2	Ներքին շփման, անկյունը, աստիճան	φ	—	—	40	22
3	Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	—	—	1	28
4	Ձևախախտման մոդուլը, Մ Պա	E_0	—	—	32	16
5	Պայմանական հաշվարկային դիմադրությունը, Մ Պա	R_0	—	—	0.25	0.22
6	Ներքնակի գործակիցը (коэфф. сцепления) տ/մ ³	C_1	—	—	5000	2000
7	Գրունտի մշակման պարագրաֆը ՇՆԵԿ IV-2-82,	աղյ. 1-1	13(III)	24 ^բ (III)	6 ^դ (III)	33 ^գ (III)
		աղյ. 3-1	—	—	—	—
8	Գրունտի կարգը ըստ նրա սեյսմիկ հատկանիշների, ՀՀՇՆ II – 6 .02. 2006		III	III	III	III

5.4 Ստորև տրվում է ֆոնդային նյութերից վերցված, պոմպակայանին հարակից տարածքում հորատված հորատանցքի նկարագրությունը՝

Հորատանցք թիվ 41(Արարատ քաղաքի գլխավոր հատակագիծ)

0.0-0.5 լիցքային գրունտ չպառկապնդված, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ 0.5 մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 25%

0.5-2.5 ավազակավ, բաց շագանակագույն, գորշավուն երանգով, պինդ և ծիգ պլաստիկ թանձրության, կոպճի, հազվադեպ ճալաքարի պարունակությամբ մինչև 5%, սակավախոնավ և խոնավ:

2.5-3.5 ավազ կոպճային կապտավուն երանգներով, կոպիճով մինչև 5%, փուխր, մանր ավազի նրբաշերտերով, կավային նյութի խառնուրդով մինչև 5%, ջրհագեցած:

3.5-8.3 ավագակավ, բաց շագանակագույն, գորշավուն երանգով, պինդ և ձիգ պլաստիկ
4.8 թանձրության, կոպճի, հազվադեպ ճալաքարի պարունակությամբ մինչև 15 %, ջրհագեցած:

6. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Չորրորդականի հասակիլճա-ալյուվիալ առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք տեղադրված են 1.0-2.0 մետր խորությունների վրա:

7. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն անցման գոտիներում բացակայում են: Դրենաժային համակարգի գծուղիների անցման գոտիներն ունեն պայմանական բարենպաստ ինժեներա-երկրաբանական պայմաններ:

8. Համաձայն ՀՀՇՆ II – 6.02.2006 ուսումնասիրվող տեղամասը մտնում են III (երրորդ) սեյսմիկ գոտու մեջ: Տեղամասի գրունտային պայմանների գործակիցը (K_0) ըստ թիվ 4 աղյուսակի կկազմի 1.0: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ $A_{max}=0.40g \times 1.0= 0.40 g$

9. Միաժամանակ նշում ենք, որ սույն եզրակացությունը կազմվել է ֆոնդային և տարածքի տեղազննման նյութերի հիման վրա, ուստի փաստացի գոյություն ունեցող երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի և եզրակացության մեջ տրված նկարագրության միջև հնարավոր են որոշ անհամապատասխանություններ, որոնք կճշտվեն հիմքերի փոստրակը և խրամուղիները փորելուց հետո ինժեներ-երկրաբանի կողմից դրանց զննման ակտը կազմելու ժամանակ:

Սույն եզրակացությանը կցվում է՝

- Ջրագծերի անցման գոտիների պլանը նշահարված գծուղիների և պոմպակայանի տեղամասի տեղադրմամբ: Գծագիր - 1

Ինժեներ-երկրաբան՝



Ն. Ալեքսանյան

1 ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈՍԿՈՒ ԿՈՐՋՄԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻ ԲԱՆԱԿԱՆԻ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՋԵՑՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Բանավանը գտնվում է Արարատ քաղաքի հարավ-արևելյան մասում, տեղակայված 827-838մ բացարձակ նիշերի սահմաններում, և զբաղեցնում է մոտ 14հա հողատարածք: Ուսումնասիրությունների ընթացքում (փետրվար-մարտ 2017թ.) բանավանի շենքերի և շինությունների հիմքերը, ինչպես նաև նկուղային հարկերը գտնվում են ջրասուզված վիճակում, որը ժամանակի ընթացքում կարող է բերել անցակալի հետևանքների: Ջրակալման հիմնական պատճառը հանդիսանում է ստորերկրյա ջրերի մակարդակի բարձր տեղադիրքը, որոնք գտնվում են երկրի մակերևույթից 0.5-1.0մ խորությունների վրա:

Բանավանում շենքերի կառուցումից առաջ (1970ական թվականներին) և կառուցման ընթացքում, կառուցվել են ստորերկրյա խողովակային հորիզոնական դրենաժներ և ջրերն ուղղվել են թաղամասի հարավային մասում նախատեսված պոմպակայան, որտեղից հեռացվել են մոտ 60մ հեռավորության վրա գտնվող բաց հողային դրենաժներ: Սակայն համակարգի շահագործման բացակայության պատճառով խողովակները խցանվել են, հորերը լցվել, պոմպակայանը գտնվում է վթարային վիճակում, որի արդյունքում ստորերկրյա ջրերի հեռացումը չի կատարվում: Արդյունքում բանավանի տարածքում ստեղծվել է վերը նշված իրավիճակը՝ հիմքերի և նկուղային հարկերի ջրակալումը:

Բանավանի շինությունների հիմքերը ստորերկրյա ջրերով ջրակալումը վերացնելու և շինարարական նորմերով սահմանված խորությունների վրա պահելու համար անհրաժեշտ մշակել ջրիջեցման և ջրահեռացման համապատասխան միջոցառումներ: Նման դեպքերում ստորերկրյա ջրերի վնասակար ազդեցությունը կանխելու կամ բացառելու համար կիրառվում է տարբեր միջոցառումներ, որոնց շարքում առավել արդյունավետ միջոցառումներից է համարվում դրեժային համակարգի կառուցումը: Դրենաժի տիպի ընտրությունը հիմնականում կախված է տարածքի հիդրոերկրաբանական պայմաններից և կիրառվող միջոցառումների կատարման հնարավորություններից:

Բնակավայրային տարածքների և արդյունաբերական տերիտորիաների գրունտային ջրերի բարձր մակարդակի իջեցման նախընտրելի տարբերակը հանդիսանում է հորիզոնական փակ դրենաժային համակարգը, որը ներրկա պայմաններում ստացել է լայն կիրառություն: Անկախ դրենաժի տիպից, դրանց նախագծման բոլոր սկզբունքային հարցերը՝ տեղադրման սխեմայի և խորության

հիմնավորումը, ջրաքանակի որոշումը և դեպրեսիոն կորերի կառուցումը և այլն, լուծվում են հիդրոտերկրաբանական հաշվարկներով:

Բանավանի տարածքի հիդրոտերկրաբանական պայմանների բնութագիրը տրվում է համաձայն դաշտային փորձաֆիլտրացիոն աշխատանքներից և նախկին «Հայպետնախագիծ» ինստիտուտի կողմից կատարված հիդրոտերկրաբանական հետազոտության հիման վրա: [1]: Ուսումնասիրվող տեղամասում գրունտային ջրատար հորիզոնը, ներկայացված է միաշերտ գրունտներով՝ նրբահատիկ ավազներից մինչև խոշորահատիկ ավազներ, տարբեր չափի կոպիձների լցումով: Ջրատատար հորիզոնի հաստությունը հիմնականում 4.5 – 8.0մ է, որոշ տեղերում այն հասնում է 12.0 – 13.0մ-ի: Վերևից այն սահմանափակված է ոչ մեծ հաստության (0.5-1.2մ) կավավազային և կավային գրունտներով, իսկ ներքևից՝ չորրորդական հասակի հիմնականում հոծ, ջրամերժ տրավերտիններով: Գրունտային ջրերի մակարդակը 0.1-0.3մ, որոշ տեղերում մինչև 0.6մ ցածր է առաջին թույլ ճնշումային ջրատար հորիզոն ջրերի մակարդակից, սյսինքն՝ ունի թույլ ճնշումային սնում:

Արարատյան դաշտավայրում, այդ թվում նաև ուսումնասիրվող տեղամասում հորիզոնական դրենաժների և ոչ խորը փորվածքների հիդրոտերկրաբանական հաշվարկներ կատարելիս կարելի է անտեսել նկատվող թույլ ճնշումային սնումը և հաշվարկները գործնական նպատակների համար տանել ոչ ճնշումային ֆիլտրացիոն միջավայրին վերաբերող բանաձևերով: [2]: Նման հիդրոտերկրաբանական սխեմայի դեպքում գեոֆիլտրացիոն հաշվարկները սովորաբար կատարվում են անալիտիկ մեթոդով:

Ջրատար հորիզոնի հզորության և նախատեսվող դրենաժների խորության համադրումից ելնելով դրանք կլինեն ոչ կատարյալ տիպի:

Ելնելով բանավանի տարածքում առկա շենքերի ստորերկրյա կոմունիկացիաների և այլ շինությունների դասավորությունից, մեխանիզմների աշխատանքների հնարավորությունից, ինչպես նաև հաշվի առնելով տարածքի հիդրոտերկրաբանական պայմանները նպատակահարմար ենք համարում ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումը և դրանց հեռացումը իրականացնել հորիզոնական օղակաձև դրենաժների կառուցումով: Բանավանի տարածքում դրանց դասավորությունը բերված է նկ. 1-ում:

Բանավանի շենքերի հիմնատակերը գտնվում են երկրի մակերևույթից 2.2-2.3մ խորությունների վրա: Համաձայն գործող շինարարական նորմերի բնակավայրերի շենքերի հիմնատակերի անվտանգությունը ստորերկրյա ջրերի վնասակար ներգործությունից պաշտպանելու համար անհրաժեշտ է դրանց մակարդակը իջեցնել 0.2-0.3մ ցածր հիմնատակերից:


Հաշվի առնելով այս ամենը, ինչպես նաև հորիզոնական դրենաժների իրական հեռավորությունը իրարից նախատեսվում է դրենաժների խորությունը անել միջինը **3.5մ`** հաշված երկրի մակերևույթից:

Ստորև տրվում է դրանց հիդրոերկրաբանական հաշվարկը:

Քաղաքային և արդյունաբերական շինարարությունում կիրառվող դրենաժների երկարաժամկետ գործունեությունից ելնելով` նրանց հաշվարկի համար, որպես կանոն օգտագործում են ստորերկրյա ջրերի կայունացած շարժման հավասարումները [3]:

Գրունտային ջրատար հորիզոնի վերջավոր հզորության դեպքում ոչ կատարյալ տիպի (նկ.2) հորիզոնական օղակաձև դրենաժների ծախսը, ֆիլտրացիայի կայունացած շարժման պայմաններում կարելի է որոշել հետևյալ բանաձևով [3.4]:

$$Q = \frac{\pi k (2H - S_0) S_0}{\ln \frac{R}{r} + \eta} \quad (1)$$




Նկ.2 Գրունտային ջրատար հորիզոնում ոչ կատարյալ տիպի հորիզոնական օղակաձև դրենաժի հաշվարկային սխեմա.

1 - Պաշտպանվող կառույց; 2 - Գրունտային ջրերի մակարդակը մինչև դրենաժների կառուցումը(բնական պայմաններում); 3 - Նույնը դրենաժների կառուցումից հետո;
4 - Ջրատար հորիզոնի հատակի ջրամերժ շերտը; 5 - Հորիզոնական օղակաձև դրենաժ

որտեղ՝ Q -ն օղակաձև դրենաժի գումարային ծախսն է, մ³/օր; H -ը ջրատար հորիզոնի հաստությունն է, մ; K -ն ջրատար հորիզոնի ֆիլտրացիայի գործակիցն է, մ/օր; S_0 -ն դրենաժի եզրագծում գրունտային ջրերի մակարդակի իջեցումն է, մ; R -ը դեպրեսիայի շառավիղն է՝ հաշված երկու զուգահեռ դրենաժների կենտրոնից ($R = \frac{B}{2} + R_0$); B -ն միջդրենաժային հեռավորությունն է; R_0 -ն դրենաժի ազդման շառավիղը (տես՝ նկ.2); r -ը դրենաժի բերված շառավիղն է, մ; q -ն ոչ կատարյալ հորիզոնական օղակաձև դրենաժի հիդրավլիկական դիմադրության ցուցանիշն է:

Դրենաժի բերված շառավիղը (r), կախված հատակագծում նրանց փոխդասավորությունից, որոշվում է տարբեր բանաձևերով [4]:

Մեր դեպքում հաշվի առնելով նախատեսվող դրենաժների դասավորությունը, որը հիմնականում պայմանավորված է բանավանի շենքերի տեղադիրքերով, օղակաձև դրենաժներով ընդգրկված տարածքը բաժանվել է երկու տեղամասի (I և II): Դրանցից I-ը ունի ուղղանկյունաձև դասավորություն, իսկ II-ը՝ π -աձև դասավորություն (տես՝ նկ.1 և 3 ա, բ):



Նկ.3 Օղակաձև դրենաժների ձևերը հատակագծում

ա) – ուղղանկյուն ձևի,

բ) – π -աձևի.

I-ի դեպքում՝

$$r = \eta \frac{a+b}{4} \quad (2)$$

II-ի դեպքում՝

$$r = \sqrt{\frac{(a+b-c)c + 0.5(a-c)(b-c)}{\pi}} \quad (3)$$

որտեղ՝ η -ն գործակից է՝ կախված a/b հարաբերությունից, տատանվում է 1.0-1.18 սահմաններում [4]: Մնացած նշանակումները բերված են նկ. 3-ում: Դրենաժի ազդման շառավիղը (R_0) կարելի է որոշել հետևյալ էմպիրիկ բանաձևով, որը կիրառելի է Արարատյան դաշտի հիդրոերկրաբանական պայմանների համար.

$$R_0 = 10\sqrt{HKS_0} \quad (4)$$

Ոչ կատարյալ դրենաժի հիդրավիկական դիմադրության ցուցանիշը որոշվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$\eta = \frac{m}{\pi r} \ln \frac{8r}{r_0} - \ln\left(1 + \frac{m}{r}\right) \quad (5)$$

որտեղ՝ m -ը ջրատար շերտի հաստությունն է՝ հաշված դրենաժում ջրի մակարդակից,

r_0 -ն դրենաժի շառավիղն է կոպճաավազային հակադարձ ֆիլտրի հաշվառմամբ:

Օղակաձև դրենաժի կենտրոնական մասում գրունտային ջրերի մակարդակը՝ հաշված դրենաժում ջրի մակարդակից (Δh) կարելի է որոշել՝

$$\Delta h = S_0 \frac{\ln \frac{8r}{r_0} - \pi + \frac{2r}{m} F\left(\frac{r}{m}\right)}{\ln \frac{8r}{r_0} + \frac{2r}{m} (f_1 - f_2)} \quad (6)$$

$F\left(\frac{r}{m}\right)$, $f_1\left(\frac{r}{m}\right)$, $f_2\left(\frac{R}{m}\right)$ արգումենտների ֆունկցիաները որոշվում են ըստ գրաֆիկների [3, 4]:

Միջդրենաժային տարածքում գրունտային ջրերի մակարդակի իջեցման ժամանակահատվածը (t , օր) կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$t = \frac{\mu \pi \left(\frac{B}{2}\right)^2 (S_0 - \Delta h)}{8KS_0 \Delta h} \quad (7)$$

որտեղ՝ μ -ն ջրատար շերտի գրունտների ջրատվության գործակիցն է: Մնացած տառային նշանակումները տրված են նկ. 2-ում:

Այդ ժամանակահատվածի որոշումը շատ կարևոր է, երբ անհրաժեշտ է հարկավոր պահին չորացնել նկուղները, նոր կառուցվող շենքերի փոսորակները, կոմունիկացիոն խրամուղները և այլն:

Մեր տրամադրության տակ եղած ելակետային տվյալների հիման վրա, վերը բերված բանաձևերով, կատարենք օղակաձև դրենաժների հաշվարկը, այն է՝ օղակաձև դրենաժի գումարային ծախսը (Q), դրանց կենտրոնական մասում ջրի մակարդակի իջեցումը՝ հաշված դրենաժում ջրի մակարդակից (Δh) և այն

Ժամանակահատվածը, որի դեպքում ջրի մակարդակի իջեցումը կհասնի իրա սահմանային արժեքին (t): Նշված բաղադրիչները հաշվարկենք I և II տեղամասերի համար առանձին-առանձին:

I-ին տեղամասում ելակետային տվյալները այսպիսին են. $H=7.0$ մ, $m=4.5$ մ, $K=6.0$ մ/օր, $S_0=2.5$ մ, $B=100$ մ, $r_0=0.5$ մ, $a=100$ մ, $b=400$ մ, օղակ կազմող դրենաժների երկարությունը հավասար է 1000 մ, $\mu=0.25$, $\eta=1.14$:

Նախապես հաշվարկենք օժանդակ պարամետրերը (բանաձևեր 2, 4, 5)

$$r=1.14\frac{100+400}{4}=142.5 \text{ մ},$$

$$R=\frac{B}{2}+R_0=50+10\sqrt{7*6*2.5}=50+102.5=152.5 \text{ մ}$$

$$\eta=\frac{4.5}{3.14*142.5}\ln\frac{8*142.5}{0.5}-\ln(1+\frac{4.5}{142.5})=0.043$$

Այժմ որոշենք օղակաձև դրենաժի ծախսը (բանաձև 1)

$$Q=\frac{3.14*6(2*7-2.5)}{\ln\frac{152.5}{142.5}+0.043}=\frac{541.65}{0.11}=4924.1 \text{ մ}^3/\text{օր}=56.7 \text{ լ/վրկ}$$

Դրենաժի 1գծ.մ-ից մուտք գործող ջրի ծախսը կկազմի

$$q=\frac{Q}{L}=\frac{4924.1}{1000}=4.92 \text{ մ}^3/\text{օր}=0.057 \text{ լ/վրկ}:$$

Օղակաձև դրենաժի կենտրոնական մասում Δh -ի մեծության հաշվարկման համար, նախ որոշենք $F(\frac{142.5}{4.5}=31.7)$, $f_1(\frac{142.5}{4.5}=31.7)$ և $f_2(\frac{152.5}{4.5}=33.9)$ արգումենտների ֆունկցիաների արժեքները, որոնք համաձայն գրաֆիկների [3] կազմում են համապատասխանաբար (-0.02) , 1.8 և 1.7 :

Համաձայն (6) բանաձևի Δh -ը կլինի հավասար՝

$$\Delta h=2.5\frac{\ln\frac{8*142.5}{0.5}-3.14+63.3*(-0.02)}{\ln\frac{8*142.5}{0.5}+63.3(1.8-1.7)}=0.6 \text{ մ}$$

Ինչպես երևում է հաշվարկից I-ին տեղամասի օղակաձև դրենաժի կենտրոնական մասում գրունտային ջրերի մակարդակը դրենաժում ջրի մակարդակից հաշված կազմում է 0.6 մ, այսինքն գրունտային ջրերի մակարդակը երկրի մակերևույթից հաշված կգտնվի 2.9 մ խորության վրա, իսկ շենքերի հիմնատակերից՝ $0.6-0.7$ մ խորությունների վրա, որը լիարժեքորեն բավարարում է շինարարական նորմերով սահմանված չափաքանակներին (տես վերևը):

Հետևապես I-ին տեղամասի օղակաձև դրենաժը, նրանց ընտրված և հաշվարկված պարամետրերի պահպանման դեպքում շենքերի հիմնատակերը գերծ կպահեն ստորերկրյա ջրերով ջրակալումից, դրանց շահագործման ողջ ընթացքում:

Միջդրենաժային տարածքում գրունտային ջրերի մակարդակի իջեցման

ժամանակահատված՝ նրանց կառուցումից հետո, համաձայն բանաձև (6) կկազմի՝

$$t = \frac{0.2 \cdot 3.14 \left(\frac{100}{2}\right)^2 (2.5 - 0.6)}{8 \cdot 6 \cdot 2.5 \cdot 0.6} = 41.4 \text{ օր}$$

II-րդ տեղամասի օղակաձև դրենաժի ելակետային տվյալները այսպիսին են.
H=5.5մ, m=2.5մ, K=5մ/օր, S₀=2.5մ, B_{միջ}=100մ, r₀=0.5մ, a=240մ, b=210մ, c=100մ, L=700մ, μ=0.15:

Նույն եղանակով հաշվարկվել են նաև II-րդ տեղամասի օժանդակ պարամետրերը, գումարային ծախսը, նրա կենտրոնական մասում գրունտային ջրերի մակարդակի բարձրությունը՝ հաշված դրենաժներում ջրի մակարդակից և միջդրենաժային տարածքում գրունտային ջրերի մակարդակի իջեցման ժամանակահատվածը: Ինչպես II տեղամասի, այնպես էլ I տեղամասի հաշվարկային տվյալները բերվում են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

I և II տեղամասերի օղակաձև դրենաժների հիդրոերկրաբանական հաշվարկային տվյալները

Տեղա մասի համա րը	r	R ₀	R	η	F($\frac{r}{m}$)	f ₁ ($\frac{r}{m}$)	f ₂ ($\frac{R}{m}$)	Q _{գում}		q, լ/վրկ	Δh, մ	t, օր
								մ ³ /օր	լ/վրկ			
I	142.5	102.5	152.5	0.043	-0.02	1.8	1.7	4924.1	57.0	0.057	0.6	41.4
II	117	82.9	132.9	0.03	-0.015	1.2	1.1	2224	25.7	0.04	0.44	55.1
								7148.1	82.7			

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից օղակաձև դրենաժների II-րդ տեղամասում գրունտային ջրերի մակարդակի բարձրությունը նրա կենտրոնական մասում՝ հաշված դրենաժում ջրի խորությունից կազմում է 0.44մ, որը նույնպես լիարժեքորեն բավարարում է շինարարական նորմերին:

Արարատ քաղաքի ոսկու կորզման ֆաբրիկայի բանավանի տեղամասից գրունտային ջրերի հեռացումը հիմնավորված և արդյունավետ կազմակերպելու համար ներկայացվում է օղակները երիզավորող դրենաժների համակցությունը, նրանցում ջրերի շարժման ուղղությունները, նրանց վրա տեղադրվող դիտահորերի տեղադիրքերը և հեռավորությունները իրարից (տես նկ.1):

Հորիզոնական խողովակաշարային դրենաժների կառուցումը կարելի է իրականացնել արդյունաբերության և քաղաքային շինարարությունում լայն տարածում ստացած պլաստիկ խողովակներով: Դրենաժներում ձևավորվող ջրի

հաշվարկային ծախսերից ելնելով, հաշվի առնելով նաև նրանց հիդրավլիկական թեքությունները խողովակների չտղմակավման և ողողահարման արագությունները ($0.3\text{մ/վ} < V < 1.0\text{մ/վ}$), կատարվել է դրենաժային խողովակների տրամագծերի և տեղադրման խորությունների հաշվարկ: Արդյունքները՝ բերվում են աղյուսակ 2-ում:

Աղյուսակի (2) տվյալներից երևում է, որ օղակը եզրավորող դրենաժների հարաբերական խորությունը կախված նրանց երկարությունից և հիդրավլիկական թեքությունից տատանվում է 0.12-1.1մ սահմաններում:

Հորիզոնական օղակաձև խողովակավոր դրենաժների պարամետրերի հաշվարկային տվյալները

1	2	3	4	5	6	7	8	9
Դրենաժի համարը	Երկարությունը, մ	Հիդրավլիկ թեքություն	Միավոր ծախսը, լ/վրկ	Ընդհանուր ծախսը, լ/վրկ	Հանգուցվող դրենաժներ		Գումար ծախսը, լ/վրկ	Տրամագիծը, մմ
					Համարը	Ծախսը, լ/վրկ		
Դր-2	134	0.003	0.057	7.638	-	-	-	200
Դր-3	389	0.003	0.057	22.173	- Դր - 2	- 22.173	29.811	200
Դր-5	182	0.003	0.04	7.28	-	-	-	200
Դր-4	98	0.003	0.057	5.556	- Դր-3	- 29.811	42.647	300
					Դր-5	7.28		
Դր-1	559	0.003	0.057	31.863	-	-	-	200; 300
Դր-1-1	229	0.003	0.04	9.16	- Դր-1	- 31.863	83.67	400
					Դր-4	42.647		
Դր-6	231	0.003	0.04	9.24	-	-	-	200
Դր-1-2	85	0.004	-	-	- Դր 1-1	- 83.67	92.91	400
					Դր-6	9.24		

Հարկ է նշել, որ դր-1 և դր 1-1 համարի դրենաժները մեկ ամբողջական դրենաժ է, որի ընդհանուր երկարությունը կազմում է 788մ (տես նկ. 1) և համարվում է տեղամասի գլխավոր դրենաժը (կոլեկտորը): Նրանով են հեռացվելու ուսումնասիրվող տարածքի բոլոր դրենաժների ջրերը դեպի կառուցվելիք պոմպակայանը: Այդ դրենաժի անջատումը մասերի կատարվել է պայմանականորեն՝ կապված օղակաձև դրենաժների հիդրոերկրաբանական հաշվարկների հետ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ դրենաժների հիդրոերկրաբանական հաշվարկներում դրենաժների ընդհանուր երկարությունը, սխեմատացման արդյունքում կազմել է 1700մ, իսկ հատակագծում այն 1822մ, այսինքն շեղումը կազմել է 6.7%: Վերջինով պայմանավորված նկատվում է նաև դրենաժային ջրերի գումար ծախսերի միջև շեղում (տես աղ. 1 և 2), որը կազմում է շուրջ 11%: Երկու դեպքում էլ նշված շեղումները թույլատրելի են պրակտիկ գործունեությունում:

Դեպի դրենաժ ջրի ազատ հոսքը ապահովելու համար խողովակների վրա արվում են ջրընդունիչ անցքեր: Նախատեսվում է խողովակների վրա ջրընդունիչ անցքերը (ֆիլտր) անել կլոր (8-10մմ տրամագծի) պարագծի 3/4 մասի վրա նրա ամբողջ երկարությամբ: Անցքերի հեռավորությունը իրարից պարագծով անել 10սմ, իսկ ըստ երկարության՝ 15սմ շախմատաձև դասավորությամբ: Նման մոտեցման դեպքում գումար անցքերի մակերեսը խողովակի 1գծ.մ երկարության վրա կկազմի 40-50սմ², որը լիարժեքորեն բավարարում է գործող նորմերին [3.5]: Դեպի դրենաժ ջրի ազատ հոսքը և նրանց տևական անխափան աշխատանքը ապահովելու համար անհրաժեշտ է, որ խողովակաշարի հոծ մասը (1/3) լինի վերևի մասում և խողովակը ամբողջ պարագծով պարուրվի եռաշերտ տարահատիկ նյութերով, այսպես կոչված հակադարձ ֆիլտրով: Ելնելով ջրատար գրունտների բնույթից և խողովակների անցքերի մեծությունից առաջարկվում է հակադարձ ֆիլտրի առաջին շերտը իրականացնել մանր գրաքարախճային (20-40մմ), երկրորդը՝ խոշոր կոպճային (10-20մմ), երրորդը՝ խոշոր և շատ խոշոր հատիկավոր ավազային (0.5-2.0մմ), գրունտներից, յուրաքանչյուրը 10-15 սմ հաստությամբ:


Խողովակային դրենաժի աշխատանքին հետևելու, ինչպես նաև այն մաքրելու և վերանորոգելու համար նախատեսվում է նրանց վրա կառուցել դիտահորեր: Դրենաժի ուղղագծային երկարության վրա դրանց միջև հեռավորությունը պետք է լինի ոչ ավել 50մ-ից, իսկ թեքման տեղերում պարտադիր է դրանց կառուցումը՝ անկախ նրանց հեռավորությունից: Դիտահորերի հատակային մասը (տղմագտարան) պետք է լինի 0.3մ-ից ոչ պակաս ցածր նրան միացվող դրենաժային

խողովակի ներքևի միջից: Դիտահորերի տրամագիծը, երբ նրանց խորությունը (բարձրությունը) մեծ է 3մ-ից, արվում է ոչ պակաս 1.5մ-ից: Դրանք կառուցվում են հավաքովի երկաթբետոնե օղակների շարվածքով, ծածկվում ծանր տիպի թուջե մտոցներով և կահավորում են աստիճանով [5]:

Ելնելով տեղանքի պայմաններից դրենաժային ջրերի ինքնահոս հեռացումը պետք է կատարել դր-1, դր 1-1 և դր 1-2 (հոծ՝ ոչ անցքավոր խողովակաշար) մեկ ընդհանուր գլխավոր դրենաժ հանդիսացող ուղղեգծով, այն հասցնելով նախատեսվող պոմպակայան և մեխանիկական եղանակով՝ համապատասխան մակնիշի, արտադրողականության և քանակի մղման պոմպերի միջոցով հեռացնել բանավանի տարածքից դուրս:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է ասել, որ հիդրոերկրաբանական հաշվարկներին համապատասխան առաջարկված դրենաժային համակարգերի կիրառման և կառուցման նորմերի պահպանման դեպքում կիջեցվի Արարատ քաղաքի Ոսկու կորզման ֆաբրիկայի բանավանի տարածքի գրունտային ջրերի մակարդակը օպտիմալ խորությունների վրա և նրանց ճիշտ շահագործման դեպքում գոյություն ունեցող և կառուցվող շինությունների հիմնատակերը, նկուղային հարկերը, ստորերկրյա կոմունիկացիաները և այլն զերծ կմնան ստորերկրյա ջրերով ջրածածկումից և ջրակալումից դրանց շահագործման ողջ ընթացքում:

1. Гидрогеологические исследования по водопонижению территории, отведенной под строительство поселка Зодского ЗРК в г. Арарат Араратского района. Ер. 1971
2. Աջոյան Ժ. Ա., Սարգսյան Ս. Վ., Աջոյան Վ. Ժ. Արարատյան հարթավայրի հորիզոնական դրենաժային համակարգի հաշվարկը կապված նրանց վերականգնման հետ: ԵՃՇՊՀ Գիտաժողովի զեկույցների ժողովածու: Երևան 2009. Էջ 13-19.
3. Справочное руководство гидрогеология . Т1. (Под. ред. В. М. Максимова). Л., «Недра» 1979, 512с.
4. Кольцевые дренажи в промышленном и городском строительстве. (Под. ред. С. К. Абрамова). М., 1971, 183с.
5. СНиП 2.06.15-85. Инженерная защита территории от затопления и подтопления. М., 1991. 174с.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Արարատ համայնք, Ք. Արարատ,
Շահումյան 34, Հեռ. (0234)44747, Ֆաքս
(0234)44747 , ararat.ararat@mta.gov.am

N 0189

07 ապրիլ 2017թ.

«ԿՈՄՈՒՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Մ.ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան

Հայտնում ենք Ձեզ,որ Արարատ քաղաքի ՈԿՖ բանավանի ստորգետնյա դրենաժային համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակելիս ավելցուկային գրանտի տեղափոխումը անհրաժեշտ է հաշվարկել 3,0 կմ հեռավորությամբ,ինչպես նաև տեղեկացնում ենք,որ շինարարական աշխատանքների ընթացքում բնակչության հետ կապված հնարավոր խոչնդոտների վերացումը Արարատի համայնքապետարանը վերցնում է իր վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՐԱԿԱԶՄԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Nº	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Ընդհանուր տվյալներ	S-1-1
2	Բնակավայրի տեղադիրքային սխեմատիկ հատակագիծ	S-1-2
3	Նախագծվող դրենաժային համակարգի տեղադիրքային հատակագիծ, Մ1:15000	S-1-3
4	Նախագծվող դրենաժային գծեր ԴՐ-1, ԴՐ-1-1, ԴՐ-1-2 ԴՐ-2, ԴՐ-3, ԴՐ-4, ԴՐ-5, ԴՐ-6-ի ուղեգծերի հատակագիծ, Մ 1:1000	S-1-4
5	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-1-ի երկայնական և լայնական կտրվածքներ	S-1-5
6	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-1-ի հորերի մասնագիր	S-1-6
7	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-1-1-ի երկայնական կտրվածք	S-1-7
8	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-1-1-ի լայնական կտրվածք, հորերի մասնագիր	S-1-8
9	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-1-2-ի երկայնական և լայնական կտրվածքներ, հորերի մասնագիր	S-1-9
10	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-2-ի երկայնական և լայնական կտրվածքներ, հորերի մասնագիր	S-1-10
11	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-3-ի երկայնական կտրվածք	S-1-11
12	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-3-ի լայնական կտրվածք, հորերի մասնագիր	S-1-12
13	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-4-ի երկայնական և լայնական կտրվածքներ, հորերի մասնագիր	S-1-13
14	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-5-ի երկայնական կտրվածք	S-1-14
15	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-5-ի լայնական կտրվածք, հորերի մասնագիր	S-1-15
16	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-5-ի երկայնական կտրվածք	S-1-16
17	Նախագծվող դրենաժային գիծ ԴՐ-6-ի լայնական կտրվածք, հորերի մասնագիր	S-1-17
18	Նախագծվող դրենաժային խողովակների անցքերի դասավորվածությունը	S-1-18
19	Նախագծվող դրենաժային գծերի աշխատանքների ծավալների և դիտահորերի հողային աշխատանքների ծավալների ամփոփագիր	S-1-19
20	Դիտահորերի հանգույցներ	S-1-20
21	Կոյուղու ե/ք հավաքովի դիտահոր	S-1-21

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ




- Դրենաժային համակարգի հավաքվող ջրերը ինքնահոս կիեռացվեն գոյություն ունեցող դրենաժային պոմպակայանի տարածքում նախագծվող պոմպակայան:
 - Դրենաժային համակարգի դասավորությունը հատակագծում, դիտահորերի տեղերը և բարձրությունները ենթակա են տեղում ճշտման ըստ փաստացի իրավիճակի:
 - Դրենաժային համակարգի կառուցումը պետք է սկսել պոմպակայանի ջրահեռացման գծից (գործող դրենաժային հողային առու թափվելու կետից)՝ ՊԿ-1 և պոմպակայանի կառուցումից, որից հետո շարունակել ԴՐ-1-2-ից ջրերի հեռացման հակառակ ուղությամբ:
 - Շինարարության կազմակերպմանը վերաբերող բոլոր աշխատանքները՝ ջրի հեռացման փոսորակների, դրենաժային ջրերի մղման համար ժամանակավոր պոմպերի տեղադրումը պետք է գնահատվեն շինարարի կողմից՝ համաձայն շինարարության կազմակերպման նախագծի:
 - Դրենաժային գծերի խրամուղիների և փոսորակների շեպերը ամրացվում են ամբողջությամբ: Խրամուղիների և փոսորակների շեպերի կոնստրուկտիվ ձևի, տիպի լուծումները ընտրում է շինարարը՝ համաձայն շինարարության կազմակերպման նախագծի:
 - Հակադարձ ֆիլտրի շերտերի իրականացման համար նախագծով նախատեսված է պաշտպանիչ վահաններ H=0.9մ, L=20մ(4հատ), որոնք օգտագործվելու են միայն շինարարության ընթացքում: Պաշտպանիչ վահանները տեղափոխվում են յուրաքանչյուր 20մ երկարությամբ ֆիլտրի իրականացումից հետո:
 - Դրենաժային խողովակների շուրջը նախատեսված է եռաշերտ ֆիլտրի պատրաստում:
 - Առաջին շերտ. 20÷40մմ հատիկների խոշորության լվացված կոպիճ 10սմ հաստությամբ: Անցքերի շուրջը առաջին շերտը տեղադրվում է ըստ կոպիճի հատիկների խոշորության՝ սկզբից խոշորը (40մմ), վերջում մանրը (20մմ):
 - Երկրորդ շերտ. 20÷10մմ հատիկների խոշորության լվացված կոպիճ 10սմ հաստությամբ: Անցքերի շուրջը առաջին շերտը տեղադրվում է ըստ կոպիճի հատիկների խոշորության՝ սկզբից խոշորը (20մմ), վերջում մանրը (10մմ):
 - Երրորդ շերտ. 0.5÷2մմ հատիկների խոշորության լվացված ավազ 10սմ հաստությամբ:
 - Խողովակաշարերի վրա բացվում են դրենաժային անցքեր 10մմ տրամագծի: Ըստ պարագծի 10սմ, ըստ երկարության 15սմ:
 - Դրենաժային համկարգը շահագործելու համար համաձայն ՇՆևԿ-ի մինչև 3մ խորության դեպքում նախատեսվում են 1.0մ իսկ 3մ-ից մեծ խորության դեպքում 1.5մ տրամագծի հորեր: Նախատեսված են հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներից պատրաստված կլոր հորեր, որոնց շինարարական գծագրերը տրված են ԿԵ բաժնում:
 - Հորերի ծածկի սալերի ընդունված վերին նիշերը ենթակա են ճշտման շինարարության ընթացքում:
 - Ավելցուկային գրունտները տեղափոխվում են մինչև 3կմ(համաձայն համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի):
 - Հորերի սպասարկման, վերանորոգման և դրենաժային համակարգի մաքրման աշխատանքներ կատարելիս, մասնագետների և բանվորների մուտքը դրենաժային համակարգի հորեր անհրաժեշտ է իրականացնել պահպանելով անվտանգության հետևյալ կանոնները.
- Պետք է միաժամանակ բաց լինեն աշխատանք նախատեսվող հորի երկու կողմերում գտնվող հորերը.
 - Ստուգել հորերում շնչառության համար վնասակար կամ այլ վտանգավոր գազերի առկայությունը և ձեռնարկել միջոցառումներ դրանց հեռացման համար.
 - Սպասարկումն իրականացնել մեկից ավելի անձանց մասնակցությամբ.
 - Հորեր մուտք գործելիս անհրաժեշտ է ունենալ անհատական, շնչառությունը լիարժեք ապահովող սարքվորումներ:


ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՀԱՄԱԶԱՅՆ.

ա) ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ

բ) ԳՈՐԾՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ

- ՇՆ և Կ 2.04 03 - 85 ՋՐԱՀԵՌԱՅՈՒՄ. ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
- ՇՆ և Կ 2.06 08 - 87 ԲԵՏՈՆԱՅԻՆ ԵՎ Ե/Բ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ
- ՇՆ և Կ 3. 02.01 - 87 ՀՈՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ. ՀԻՄՆԱՏԱԿԵՐ ԵՎ ՀԻՄՔԵՐ
- ՇՆ և Կ 2.06 01 - 86 ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐ
- ՇՆ և Կ 2.04.02 - 84* ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ. ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
- ՇՆ և Կ 3.05.04 - 85* ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՅՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
- ՇՆ և Կ III - 42 - 80 ՄԱԳԻՍՏՐԱԼ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐ

			ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈԿՖ ԹԱՂԱՄԱՍԻ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊՈՍՊԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ	ԱՔԴՀ-1/2017 ԵՐԵՎԱՆ	
Ն.Գ.Ը.	Գ. ՓՈՔՐԻԿՅԱՆ		ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	Փուլ	
Նախագծեց	Ս. ՓՈՔՐԻԿՅԱՆ			ԱՆ	
Ստուգեց	Ս. ԹԱՐՅԱՆ		Ընդհանուր տվյալներ	S-1	
				Թերթ	Թերթեր
				1	21



			ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈԿՖ ԹԱՂԱՄԱՍԻ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ	ԱՔԴՀ-1/2017 ԵՐԵՎԱՆ
Ն.Գ.Ը.	Գ. ՓՈՔՐԻԿՅԱՆ		ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	Փուլ
Նախագծեց	Ս. ՓՈՔՐԻԿՅԱՆ			ԱՆ
Ստուգեց	Ս. ԹԱՐՅԱՆ		Բնակավայրի տեղադիրքային սխեմատիկ հատակագիծ	S-1
				թերթ
				21



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ՂՐ-ո

ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՎՈՂ ԳԾԵՐ
- ՊԿ-1

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԶՐԱՀԵՈՒՑՄԱՆ ԳԻԾ
- ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐ, ՈՐՈՒՔ ԸՆԴԳՐԿԱԾ ԵՆ ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴՄԱՆ ԳՈՏՈՒՄ
- (de)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՊՈԼԻԹԵԽՆԵ ՆՈՂՈՎԱԿՆԵՐ


Ծ Ա Ն Ո Ւ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


